ՀՀ ԿԳՆ <<Մխիթար Սեբաստացի>>

կ/հ Խաղարկային դատարանին

Հայցվոր՝ ՀՀ ԿԳՆ <<Մխիթար Սեբաստացի>> կ/հ

դասավանդող՝ Վահրամ Վարդանի Թոքմաջյանից

Հասցե՝ ՀՀ ք. Գյումրի, Աբովյան 176

Անձնագիր՝ AF 0585911

Պատասխանող՝ <<Մխիթար Սեբաստացի>> կ/հ

Կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

Ծրագրերի ղեկավարներ՝

Գևորգ Հակոբյան

Մարիետ Սիմոնյան

Սրբուհի Աղաբաբյան

Տաթև Բլեյան

Լուսինե Փաշայան

Լուսինե Մանուկյան

Էլեն Թադևոսյան

Լիլիթ Բաբայան

Հասցե՝ Բաբաջանյան 25

Հայցադիմում

Կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների 9.14, 9.18 և 9.19 կետերը խմբագրելու պահանջով

Սահմանված կարգի համաձայն (Կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների 9.14, 9.18 և 9.19 կետեր, ՀՐԱՄԱՆ N 12-065, 22.03.2012թ)՝ ուսումնական պարապմունքը վարողը՝ ուսուցիչը, սահմանված կարգով գրանցում է ուշացումը էլեկտրոնային մատյանում: Գրասենյակի ղեկավարը ուսումնական օրվա վերջում բացակայությունների և ուշացումների մասին տեղեկությունը փոխանցում է դպրոցի ղեկավարին: Սովորողի ուշացումը հարգելի կամ անհարգելի համարում է դպրոցի ղեկավարը: Մինչ այս պահը, բացառությամբ Ավագ դպրոց վարժարանի, որևէ հրամանագրքում չկա սովորողի ուշացման հետ կապված հրաման նկատողության կամ զգուշացման մասին: Բացի այս հանգամանքից, նորից բացառությամբ ավագ դպրոց վարժարանի և միջին դպրոցի հրամանագրքում առկա մի քանի հրամանների, չկա այլ հրաման առ այն, որ որևէ սովորող նկատողություն է ստացել ներքին կարգապահական կանոնները խախտելու համար: Թեպետ կան բացակայությունների և ուշացումների բազմաթիվ դեպքեր, որոնք հրապարակված են էլեկտրոնային մատյաններում: Այս առումով առկա են նաև բացատրագրեր (բացատրագիր ներկայացանելու կարգը ևս, ոչ միշտ է պահպանվում):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի խաղարկային դատարանի աշխատակարգը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ , 87-րդ և 88-րդ հոդվածները՝ դատարանից խնդրում եմ հետազոտել փաստերը, և կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների համապատասխան հոդվածները խմբագրել, հարկ եղած դեպքում կատարել փոփոխություններ, որոնք կսահմանեն մեխանիզմներ դասերից ուշացող և ներքին կարգապահական նորմերը խախտող սովորողներին կարգապահական տույժերի ենթարկելու, ինչպես նաև՝ ուսումնառության պայմանագիրը լուծելու համար:

Կից ներկայացնում եմ՝

Ամբողջական տեղեկատվություն առկա է էլեկտրոնային հրամանագրքերում և մատյաններում, որոնց դիտման իրավունքի հնարավորությունը տալիս է ծրագրի կամ գրասենյակի ղեկավարը:

Ավագ դպրոց վարժարանի պարագայում, այն առկա է ենթակայքում՝

http://avag.mskh.am/taxonomy/term/8

Կրթահամալիրի տնօրենի հրամանը՝

http://mskh.am/am/17003

Ներքին կարգապահական կանոններ՝

http://www.mskh.am/am/6